



Մ. ՅԱԿՈԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

* Շր. 4 Մարտ.— Ս. Իսահակայ Պարթևի Հայրապետին: Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխաղիբ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտարեան:

* Կիր. 5 Մարտ.— Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Բարսեղ Արդ. Մալէմտէրեան:

* Դչ. 8 Մարտ.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Վարդանանց մեծահանդէս նախատօնակին:

* Եչ. 9 Մարտ.— Ս. Վարդանանց զօրավարացն մերոց՝ 1036 վկայիցն (Յիշատակ միոնիոց եւ տօն ազգային): Այս տօնը Ս. Աթոռիս մէջ Ժառանգաւոր սաներու տօնը նկատուած ըլլալուն, ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարազեց Վարժարանի Փոխ-Տեսուչ Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտարեան: Ապա Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վաղգէն Ա.—ի անուան տօնին առթիւ կատարուած «Հաւատարմական Մագթանք»ի արարողութեան: Ժառանգաւոր սաներ Ս. Հաղորդաւորեան ստացան: Ս. Պատարազի աւարտին կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն՝ նախագահութեամբ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարեկեանի:

* Ուր. 10 Մարտ.— Ըստ իրաւական սովորութեան, Ս. Պատարազ մատուցուեցաւ Ուղղափառ Ասորիներու Ս. Մարկոս Աւետարանի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան: Ս. Պատարազէն ետք, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ասորիներու Գերշ. Եպիսկոպոսէն: Երթ ուղարձի Թափօրները դիտարեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարեկեան:

* Շր. 11 Մարտ.— Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն (381): Ս. Պատարազը մատուցուեցաւ Ս. Գլխաղիբ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

— Կէսօրէ ետք, նախ ի Ս. Հրեշտակապետ եւ ապա ի Ս. Յակոբ տեղի ունեցաւ խորաններու եւ սրբանկարներու վարդաւրումը:

* Կիր. 12 Մարտ.— Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի Ս. Պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Աւագեա Արդ. Պալեան:

* Գլ. 15 Մարտ. — Սկիզբ կարգաց Մեծի Պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Արեւադայ»ի առաջին, իսկ կէսօրէ ետք՝ «Եղադական»ի առաջին ժամերգութիւնները:

* Ուր. 17 Մարտ. — Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Թորոս եկեղեցիին մէջ, որ Զեռագրատունն է Ս. Աթոռիս: Հանդիսապետն էր Զեռագրատան Տեսուչը՝ Գերշ. Տ. Նորայր Արք. Պողոսեան:

* Շր. 18 Մարտ. — Ս. Թէոդորոսի գորավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրամանքի Զեռագրատան՝ Ս. Թորոս եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկազուն Վրդ. Մելիզոնեան:

— Կէսօրէ ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Մխարանութիւնը «Հրաշափառ»ով մուտք դործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը վերնատան մեր մատուռին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբավայրերու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Պաշտուրեան:

* Կիր. 19 Մարտ. — Արտաքսման: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Ապա կատարուեցաւ մեծահանդէս թափօր՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղիին շուրջ, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր եւ երգեցողութեամբ Այլակերպութեան շարականներու:

* Գլ. 21 Մարտ. — Գիշերասկիզբին, Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ Մեծ Պահոց Եկեղեցիի առաջին ժամերգութիւնը:

* Ել. 23 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախաղահեց եւ քարոզեց Գերշ. Տ. Շահէ Արք. Աճէմեան, պահեցողութեան եւ ապաշխարութեան կարեւորութեան մասին:

* Շր. 25 Մարտ. — Ս. Կիրղի Երուսաղիմացոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիրղի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 26 Մարտ. — Անառակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արք. Տաւուշարեան: Քարոզեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան, խօսքը ուղղելով ուխտաւորարար Ս. Աթոռ գտնուող 100 Պարսկահայերու խումբի մը, յորդորելով դանձոք հաստատ մնալ մեր նախնիքներու հաւատքին եւ աւանդութիւններուն վրայ:

* Գլ. 28 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Հրեշտակապետ քարոզեց նոյն վանքի Տեսուչ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեանը, մեկնաբանելով Ղուկասու Աւետարանին մէջ յիշուած անպտուղ թղենիին առակը:

* Ել. 30 Մարտ. — Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախաղահեց Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Գարիկեան: